

Հաստատված է՝
«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի
2018թ. դեկտեմբերի 12-ի թիվ 4 նիստում
Գիտական խորհրդի նախագահ՝
_____ *Հ. Մ. Սահակյան*

ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ն գործունեությունը ծավալում է գործողությունների պլանավորման սկզբունքներով: Պլանային գործողությունները պարբերաբար ենթարկվում են վերազնահատման:

1.2 Սույն ընթացակարգը վերաբերում է գործողությունների պլանների գնահատմանն ու բարեփոխումների նպատակով դրանց պարբերաբար վերանայմանը:

2. Վարչակառավարչական գործողությունների պլանների գնահատում և վերանայում

2.1 «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի վարչակառավարչական ստորաբաժանումները կազմում են իրենց գործողությունների միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը, որոնք հաստատման են ներկայացվում Գիտական խորհրդին՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

2.2 Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար ստանձնում է պատասխանատվություն իր ստորաբաժանման գծով պլանային գործողությունների փաստացի կատարման արդյունքների գնահատման, վերահսկման և պարբերաբար մոնիտորինգի գծով:

2.3 Ելնելով պլանային միջոցառումների փաստացի իրականացման մոնիտորինգի արդյունքներից, վարչակառավարչական ստորաբաժանումների ղեկավարները վերանայում են միջնաժամկետ և հեռահար գործողությունների ծրագրերը և զեկուցագրով այդ մասին տեղյակ պահում «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի ռեկտորին՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

2.4 Գործողությունների պլանների կատարման գնահատման և մոնիտորինգի արդյունքներով Գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացնում վերանայված գործողությունների պլանները:

3. Գիտակրթական գործողությունների պլանների գնահատում և վերանայում

3.1 Ամբիոնը և ստորաբաժանումները կազմում են իրենց գործողությունների միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնք ռեկտորատի հաստատմանն են ներկայացվում՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

3.2 Ռեկտորատը առավելագույնը 15 օրվա ընթացքում քննարկում է ամբիոնների և ստորաբաժանումների գործողությունների միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը և դրանց վերջնական տարբերակը ներկայացնում է հաստատման:

3.3 Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին, ռեկտորը տարեկան հաշվետվությունում ամփոփում է ամբիոնի և ստորաբաժանումների գործողությունների պլանային ծրագրերի փաստացի ձեռքբերումները և արդյունքները ներկայացնում Գիտական խորհրդի քննարկմանը:

3.4 Ամբիոնը և ստորաբաժանումների պլանային միջոցառումների փաստացի մոնիտորինգը իրականացվում է այդ օղակների ղեկավարների կողմից:

3.5 Ելնելով պլանային միջոցառումների փաստացի իրականացման մոնիտորինգի արդյունքներից, ամբիոնի և ստորաբաժանումների ղեկավարները պարբերաբար վերանայում են միջնաժամկետ և հեռահար գործողությունների ծրագրերը և զեկուցագրով այդ մասին տեղյակ ռեկտորատին: